

ԱՉԳ-ԲԱՆԱԿ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ
ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ



Տվյալները հավաքվել են «Արտիվ» կոմպյուտերային ընկերության կողմից:



ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ
2018

ԱԶԳ-ԲԱՆԱԿ
ՀԱՅԵՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ

Սերժ Սարգսյանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 3-ի հրամանագրով նրա աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը նշանակվեց ՀՀ պաշտպանության նախարար: Այս պաշտոնում Վիգեն Սարգսյանն առաջարկեց Հայաստանի պաշտպանության համակարգի հիմքում դնել «ազգ-բանակ» կոչվող հայեցակարգը: Նույն ամսում ընդունված կառավարության ծրագրում ամրագրվեց, որ պաշտպանության ոլորտում կառավարության գործունեության հիմքում դրվելու է «ազգ-բանակ» գաղափարը և «հասանելի ռեսուրսներով՝ առավելագույն արդյունք ռազմավարական սկզբունքը»:¹ Ծրագրում ամրագրվեց, որ բանակը պետք է դառնա հասարակության դպրոցն ու դարբնոցը՝ «նպաստելով բանիմաց և հայրենասեր քաղաքացու դաստիարակությանը»: Հոկտեմբերի 29-ին պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստին Վիգեն Սարգսյանը ներկայացրեց ազգ-բանակ ստեղծելու իր տեսլականը՝ հիմք դնելով գաղափարախոսության քարոզչության համար օգտագործվող մի քանի դրույթների համար: Պաշտպանության նախարարը հայտարարեց, որ հասարակությունը չի կարող ընտրել կամ չընտրել ազգ-բանակ հայեցակարգը, այլ կարող է որդեգրել այն «հենց այսօր և նորովի տեսլականով»:²

*«Մենք չենք կատարել այդ ընտրությունը՝ այն մեզ պարտադրվել է»:
Վիգեն Սարգսյան, 29.10.2016*

Հետագայում սա դարձավ գաղափարախոսության քարոզչության հիմնական դրույթներից մեկը: 2016 թվականի դեկտեմբերին Պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմական հանդեսը հրատարակեց «Ազգ-բանակ» կոլեկտիվ մենագրությունը՝ ««Ազգ-բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց Աշխարհագրից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն» վերնագրով, որը ներկայացվեց որպես «Ազգ-բանակ ամբողջական համակարգի մշակման համար գիտական հիմք»:³ Աշխատության մեջ առաջարկվող գաղափարները և դրույթներն էլ իրենց հերթին հետագայում դարձան «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչության համար օգտագործվող հիմնական փաստարկները:

Ներդրումից ի վեր հայեցակարգի քարոզչությունն ակտիվ կերպով իրականացվել է մեդիայում՝ մասնավորապես հեռուստատեսությամբ, տպագիր և առցանց մամուլում, ինչպես նաև ուսումնական հաստատություններում: Հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է հիմնականում պատմական և հավաքական հիշողության գործիքների կիրառմամբ՝ նոր ստեղծվող սոցիալական շարժումը որպես **գոյություն ունեցող և պատմականորեն արդարացված, ինչպես նաև այլընտրանք չունեցող և կենսական նշանակության ծրագիր ներկայացնելով**: Վիգեն Սարգսյանի պաշտոնավարման քսան ամիսների

¹ ՀՀ Կառավարության ծրագիր, 2016 հոկտեմբեր, <http://www.gov.am/files/docs/1950.pdf>

² ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում, 29.11.2016, <http://www.mil.am/hy/news/4466>

³ Ազգ-բանակ կոլեկտիվ մենագրություն, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ «Հայկական բանակ» ռազմական հանդես, N4 (90), 2016, https://razmavaraget.files.wordpress.com/2017/01/nation-army-collective-monograph_armenian-army1.pdf

ընթացքում «ազգ-բանակ» հայեցակարգն ամբողջական գրավոր ձևակերպում այդպես էլ չստացավ, թեև հայեցակարգի ներդրման շրջանակում առանձին օրենսդրական կարգավորումներ և նախագծեր այդուհանդերձ ընդունվեցին:

Ազգ-բանակ հայեցակարգի քարոզչության հիմնական դրույթները

Բնականոն հասարակական քննարկումից պրոպագանդան տարբերվում է իր համակարգված բնույթով, որը հետապնդում է հստակ շահ կամ իշխանության կուտակման ձգտում: «Ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է հենց համակարգված կերպով: Հայեցակարգի քարոզչության համար օգտագործվել է հեռուստատեսությունը՝ մասնավորապես Հանրային հեռուստաընկերությունը, սոցիալական ցանցերը, մշակութային գործիքներ, եկեղեցու ազդեցությունը, վարչական ռեսուրսներ՝ զինված ուժերը, ոստիկանությունը, կրթական համակարգը:

«Բանակի մասին տեղեկատվությունը պետք է նպաստի բանակի հեղինակության ամրապնդմանն ու զարգացմանը բնակչության տարբեր շերտերի աչքերում, խթանի հասարակության մեջ բանակի հետ կապված դրական սպասումները, ապահովի ազգային ներուժի մշտական հավաքագրվածությունը պետության պաշտպանության համար»:

«Ազգ-բանակ» կոլեկտիվ մենագրություն, 2016թ.

«Ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչության համար որպես գործիք կիրառվել է պատմական և հավաքական հիշողությունը: Բազմիցս պնդվել է, որ «ազգ-բանակը» նոր չի հորինված և պատմականորեն հայերը մշտապես եղել են «ազգ-բանակ»: Օգտագործելով հավաքական հիշողությունը՝ «ազգ-բանակի» պատմական հանգամանք լինելու վերաբերյալ անցյալից մի շարք դրվագներ են ներկայացվել՝ որպես բացարձակ ճշմարտություն: Օրինակ՝ ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը «Ապրիլյան պատերազմի ռազմական վերլուծություն» հոդվածում գրում է, որ «ազգ-բանակը» **պատմականորեն արդարացված միջոց է**⁴:

Համաձայն քարոզչության՝ ինքնապաշտպանության նպատակով համաժողովրդական պայքարի ձևավորման գործընթացը դարերի ընթացքում հայ ժողովրդի անվտանգության գրավականն է եղել: Ներկայացվել են պատմությունից վերցված օրինակներ, թե ինչպես է բնակչությունը սատարել բանակին՝ անհրաժեշտության դեպքում կազմելով աշխարհագոր, պատմվում է մի շարք հայտնի ճակատամարտերում այդ աշխարհագորի մասնակցության և հաջողությունների մասին: Մեղիայում հայտնվել են այս հանգամանքը «հաստատող» հոդվածներ և վերլուծություններ, համաձայն որոնց, օրինակ, «Ազգ-բանակ հայեցակարգը գենետիկայի, այլ ոչ թե մարդածին օրենքի արգասիք է»:⁵

Հայոց բանակի կազմավորման 25-ամյակի տոնակատարությանը նվիրված միջոցառմանը Վիգեն Սարգսյանը հայտարարեց, թե հայոց պատմությունը փաստում

⁴ Ապրիլյան պատերազմի ռազմական վերլուծություն, Արծրուն Հովհաննիսյան, April War 2016, <http://april2016.am/contact/>


⁵ 25-ամյա հայոց բանակը. ազգ-բանակ հայեցակարգը գենետիկայի, այլ ոչ թե մարդածին օրենքի արգասիք է. Yelaket.am, <https://yelaket.am/?p=14930&l=am>

Է, որ հայերը որպես ազգ և պետություն սկսել են թուլանալ այն ժամանակ, երբ դադարել են լինել «ազգ-բանակ»:⁶ Նման հայտարարությունները տպավորություն են ստեղծել, որ հայերն իրենց գոյության պահպանման համար պարտական են «ազգ-բանակ» լինելուն: Հիմնվելով պատմության վրա՝ այս հայեցակարգը քարոզչության կողմից ներկայացվել է նաև որպես **արդեն գոյություն ունեցող իրականություն, որը նորամուծություն չէ՝ ազգի բարեհաջող գոյատևումն ապահովող միակ տարբերակն է:** 2017 թվականի մայիսին Շուշիում, հանդիպելով բանակից նոր զորացրված երիտասարդների հետ, Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ դեռևս Շուշիի ազատագրումն է [1992 թվականի մայիսի 8] հնարավորություն տվել հայ ժողովրդին այն ժամանակ դառնալ «ազգ-բանակ»:⁸

«Ազգ-բանակ» հայեցակարգը քարոզչության կողմից ներկայացվել է նաև որպես **այլընտրանք չունեցող միջոց:**⁹ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն իր բազմաթիվ ելույթներում հայտարարել է, որ այն չի ընտրվել, այլ պարտադրվել է «օբյեկտիվ» իրականության կողմից:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ նախքան «ազգ-բանակ» կոնցեպտի առաջ քաշումը Վիգեն Սարգսյանի կողմից, այն երբևէ չի եղել լայն հանրային քննարկման առարկա: Նմանատիպ հայեցակարգ ստեղծելու կամ այն պետության հիմնական գաղափարախոսություն դարձնելու հասարակական պահանջ երբևէ չի ձևավորվել:

ՊՆ տարբեր պաշտոնյաների, նրանց հրապարակումների, այդ թվում «Հայոց բանակ» ռազմագիտական հանդեսում և «Հայ զինվոր» շաբաթաթերթում բազմիցս շահարկվել է գաղափարը, որ «ազգ-բանակը» պայմանավորված է արդի մարտահրավերների ու սպառնալիքների բնույթով, ինչպես նաև **ազգի վերածումն ազգ-բանակի արդի դարաշրջանի հրամայականն է:**¹⁰ Որոշ դեպքերում հայեցակարգը ներկայացվել է որպես արձագանք բառօրյա պատերազմին:¹¹ Իր



ՀՀ ՊՆ ՊԱՀՀ «Հայկական բանակ» ռազմական

⁶ Վիգեն Սարգսյանի ելույթը Հայոց բանակի 25-ամյակին նվիրված տոնական համերգին, Առաջին ալիք, 28.01.17, <https://www.youtube.com/watch?v=KTL-o1I4UEA>

⁷ Վիգեն Սարգսյանի ելույթը «Ազգ-բանակ 2017» համաժողովում, Արմեդիա, <http://armedia.am/arm/news/47381/azg-banak-2017-hamazhoxov-nvirvats-razmakrtakan-khndirnerin.html>

⁸ Սերժ Սարգսյանի հանդիպումը զորացրված և ծառայության մեջ գտնվող զինծառայողների հետ, 08.05.17, <http://www.president.am/hy/press-release/item/2017/05/08/President-Serzh-Sargsyan-met-with-soldiers-in-Shushi-Artsakh-Republic/>

⁹ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում, 29.11.2016, <http://www.mil.am/hy/news/4466>

¹⁰ «Ազգ-բանակ» կոլեկտիվ մենագրություն, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ «Հայկական բանակ» ռազմական հանդես, N4 (90), 2016, https://razmavaraget.files.wordpress.com/2017/01/nation-army-collective-monograph_armenian-army1.pdf

հերթին իր առջև դրված նպատակների ֆոնին, «ազգ-բանակ» հայեցակարգը առաջ է քաշել մի շարք քարոզչական դրույթներ, համաձայն որոնց՝ հայեցակարգի ներդրամամբ բանակը պետք է լիարժեք ինտեգրվի հասարակության բոլոր բնագավառներ, դառնա հասարակության շարժիչ ուժը և դարբնոցը, զինվորականները և հատկապես սպան ամենահարգված և մեծարված քաղաքացիներն են լինելու, իսկ երիտասարդները պետք է երագեն և մրցակցեն միմյանց հետ սպա դառնալու համար, զինծառայությունը պետք է դառնա սոցիալական վերելակ, հասարակությունը պետք է իր վրա վերցնի հայրենիքի պաշտպանի սոցիալական բեռը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը հայկական կրթական համակարգի անքակտելի մասն է դառնալու, հայ ազգի յուրաքանչյուր զավակ իրեն պետք է բանակի մասնիկ զգա: Քարոզչական եղանակով հաճախ է օգտագործվել Իսրայելի բանակի այս համատեքստում հաջողված մոդելը:

Պաշտոնական հայտարարություններից զատ հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է նաև փորձագիտական մակարդակով: Տարբեր, հիմնականում այդ պահին իշխանության տեսակետներին աջակցող քաղաքագետներ և փորձագետներ առաջ են քաշել քարոզչական այնպիսի դրույթներ, ինչպիսիք են՝ «ազգ-բանակն» ամենալավ բանն է, որ վերջին տասը տարիներին պատահել է Հայաստանում, «ազգ-բանակը» կենսական անհրաժեշտություն է, հասարակությունը պետք է բանակին վերաբերվի ինչպես կրոնին, ազգային ինքնությանը:

Ազգ-բանակ հայեցակարգի քարոզչության հիմնական գործիքները

«Ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչության համար օգտագործվել են սոցիալական և տեղեկատվական տեխնոլոգիաներ. հեռուստատեսությունը, ռադիոն, սոցիալական ցանցերը, առցանց 2ԼՄ-ները: Քարոզչության համար օգտագործվել են նաև կառավարական լծակներ՝ հասանելիությունը ուսումնական հաստատություններին, ոստիկանության ներգրավվածությունը: Հայեցակարգի քարոզչության համար մասնավոր հեռուստաընկերություններից բացի օգտագործվել է Հանրային հեռուստաընկերությունը: Օգտագործվել են մշակութային միջոցներ, իրականացվել են մշակութային-քարոզչական միջոցառումներ, կիրառվել է «ռազմահայրենասիրական դաստիարակություն» կոչվող համակարգը՝ թիրախավորելով հատկապես դպրոցահասակներին: Նման կերպ իշխանության կողմից վերևից ներքև պարտադրված սոցիալական այս շարժումը նպատակ է ունեցել «մոբիլիզացիայի մթնոլորտ ստեղծել երկրում»:¹²

Հայեցակարգի գաղափարական հիմք հանդիսացող ՊՆ հանդեսում հասարակական կարծիքի ձևավորման համար քննարկվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը, «որոնք հնարավորություն են ընձեռում կառավարելու մարդկանց վարքը՝ զանգվածային հաղորդակցության միջոցներով տարածելով նշանների և կերպարների որոշակի խմբեր»:

¹¹ Երիտասարդներն ազգ-բանակի զինվորներն են. Նախարար Սարգսյանը մասնակցեց քառօրյա ինտերնետի հիշատակի մոմավառությանը, Արմենպրես, 01.04.18, <https://armenpress.am/arm/news/928385.html>

¹² Ազգ-բանակ կոլեկտիվ մենագրություն, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ Հայկական բանակ ռազմական հանդես, N4 (90), 2016, https://razmavaraget.files.wordpress.com/2017/01/nation-army-collective-monograph_armenian-army1.pdf

Բանակի և հատկապես «ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակում դրա արդիականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ լուսաբանումը եղել է բացառապես դրական, երբեմն չեզոք: Բացառվել է այս թեմայի քննադատական վերլուծությունը հեռուստատեսությամբ: Հայեցակարգի քարոզչության նպատակով, ներկայացվել են պատմության մեջ բանակի ներգրավվածության, աշխարհագրի ձևավորման հաջողված օրինակները, օգտագործվել են զինվորականներին, պատերազմներին նվիրված հուշարձաններ, հուշամեդալներ, գրքեր: Գրվել են հայրենասիրական երգեր՝ նվիրված զինվորին, բանակին՝ ընդ որում երաժշտության տարբեր ժանրերի կիրառմամբ: 2017 թվականի սեպտեմբերին «Հայփոստը»



«Չինծառայողների

հրապարակեց երկու նոր նամականիշ՝ նվիրված «Չինծառայողների ապահովագրության հիմնադրամի» թեմային: Նամականիշների հետ շրջանառության մեջ են դրվել 150 և 10.000 ՀՀ դրամ արժողությամբ կտրոններ, որոնց վաճառքից ստացված հասույթը փոխանցվելու է այդ հիմնադրամի իրականացրած նախագծերին:^{13 14}

Հայեցակարգի քարոզչության համար օգտագործվել է արվեստը, մշակույթը, ինչպես նաև եկեղեցու ունեցած ազդեցությունը:

Հրապարակվել են բազմաթիվ սոցիալական գովազդներ: Պաշտպանության նախարարության «Չինուժ մեդիա» պետական հիմնարկը սոցիալական գովազդներ և տեսահոլովակներ է պատրաստել, որոնք ներկայացնում են «Ես եմ», «Պատիվ ունեմ» ծառայության տեսակների առավելությունները:¹⁵ Բացի ՊՆ առաջարկած ծրագրերից սոցիալական գովազդները ներկայացրել են նաև հայտնի մարդկանց ուղերձները զինվորներին:¹⁶

Հանրային հեռուստաընկերություն

Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ [օրենքի](#) համաձայն՝ Հանրային հեռուստաընկերության ֆինասավորումն իրականացվում է պետական բյուջեից: Նույն օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստաընկերությունը պարտավոր է ղեկավարվել օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով: Հեռուստաընկերությունը, սակայն, «ազգ-բանակ» թեման լուսաբանելիս, ինչպես առհասարակ բանակային

¹³ «Չինծառայողների ապահովագրության հիմնադրամ», Հայփոստ, <https://www.haypost.am/hy/1505802676>

¹⁴ «Չինծառայողների ապահովագրության հիմնադրամ», Հայփոստ, <https://www.haypost.am/hy/1505801706>

¹⁵ «Ես եմ» զինվորական ծառայություն, Չինուժ մեդիա, <https://www.youtube.com/watch?v=qDEL1ZHk8DU>: «Պատիվ ունեմ», Չինուժ մեդիա, <https://www.youtube.com/watch?v=SVXke7p20Rs&t=13s>

¹⁶ «Բարեմաղթանքներ նորակոչիկներին», Չինուժ մեդիա, <https://www.youtube.com/watch?v=FxCMEmwZ6E&list=PLwiQcgoes4xAScPkzriyUNAFsC9a1QcH->

թեմաներին անդրադարձի դեպքում, որևէ քննադատական կարծիք չի ներկայացրել դրա վերաբերյալ՝ միայն դրական կողմից ներկայացնելով Վիգեն Սարգսյանի նախաձեռնությունը և դրա իրականացման ուղղությամբ տարվող գործընթացը: «Իրագել քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ Հանրային հեռուստաընկերության «Օրակարգ» լրատվական ծառայությունը, փրայմ թայմում լուսաբանելով «ազգ-բանակ» հայեցակարգը, բացառապես դրական, երբեմն չեզոք տոնայնությամբ է ներկայացրել այն: Ավելին, հեռուստաընկերության լրատվական ծառայությունը բացասական տոնայնությամբ է լուսաբանել այն անձանց, ովքեր դեմ են եղել հայեցակարգին կամ դրա որևէ բաղադրիչի:

Լուսաբանման ընթացքում հեռուստաընկերությունն առանձին անդրադարձեր է կատարել «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերին՝ ներկայացնելով միայն դրանց առավելությունները: Առանձին ռեպորտաժներ են պատրաստվել բանակ զորակոչվող այն զորակոչիկների մասին, ովքեր ծառայության համար ընտրել են «Ես եմ» ծրագիրը: Ռեպորտաժների միջոցով փորձ է արվել խրախուսել ծառայության այս տեսակը, ներկայացնել բացառապես դրա առավելությունները, ներկայացրել այն որպես շահավետ ծառայություն:¹⁷ Մեկ այլ ռեպորտաժում հեռուստաընկերությունը «միկրոհետազոտություն» է արել, փաստելու որ «Ես եմ» ծրագրով առաջարկվող ծառայության առաջարկները «կարևոր են» և դրական վերաբերմունք է ստեղծել



ծրագրի վերաբերյալ:¹⁸

Հեռուստաընկերության և լրատվական

տվական ծառայության թողարկումների ընթացքում հիմնականում ընդգծված են հայեցակազմի քարոզչության այն դրույթները, համաձայն որոնց զինվորը և սպան պետության խորհրդանիշն են, բանակը ժողովրդի բանակն է, եկեղեցին անքակտելի կապ ունի բանակի հետ, սփյուռքը պետք է իր դերն ունենա բանակի կազմավորման հարցում, «իրական տղամարդը» պետք է ծառայի բանակում:

Առանձին ռեպորտաժներ են պատրաստվել լավ ծառայությամբ աչքի ընկած և խրախուսված զինծառայողների մասին՝ նրանց անձնական պատմություններով:

Հեռուստաընկերությունը, տեղական հեռարձակումների ընթացքում հայեցակարգի քարոզչությունից զատ, առանձին հաղորդաշար է հեռարձակել

¹⁷ Շահավետ ծառայություն. 20 երիտասարդ ասում է «Ես եմ», «Օրակարգ» լրատվական, 20.01.18, Հանրային հ/ը, https://www.youtube.com/watch?time_continue=362&v=3k9bBT4YmLw

¹⁸ «Ես եմ», առաջին նորակոչիկները, «Օրակարգ» լրատվական, 20.01.18

արբանյակային հեռարձակմամբ: «Ազգ-բանակ» կոչվող հաղորդաշարը նախատեսված է Հայաստանից դուրս բնակվող լսարանի համար: Այս հաղորդումները հիմնականում պատմում են բանակի կազմավորման պատմության, գործունեության և զարգացումների մասին:

Հանրային հեռուստաընկերությունը նաև հեռարձակում է ՊՆ «Չինուժ» հաղորդաշարը, որը բանակի առօրյայի մասին է: Հաղորդման ընթացքում չեն հնչում քննադատական տեսակետներ պաշտպանական կառույցի հասցեին:

Հավելենք, որ «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է նաև մասնավոր հեռուստաընկերություններով:

Սոցիալական ցանցեր

Վիզեն Սարգսյանի հանձնարարականով¹⁹ գրված «Ազգ-բանակ» կոլեկտիվ մենագրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձրված նաև սոցիալական ցանցերում բանակի վերաբերյալ քննարկումներին: Ըստ հեղինակների՝ համացանցն առավել համակրելի է երիտասարդների և միջին տարիքի մարդկանց համար, այդ իսկ պատճառով «համացանցային տեղեկատվահաղորդակցական գործընթացների օգտագործումը բանակի և զինծառայողների դրական իմիջի ձևավորման և տարածման համար հեռանկարային է»: Որպես հայեցակարգի հիմք ծառայող աշխատության մեջ նշված է, որ «ազգ-բանակը» պետք է լինի իշխանության նախաձեռնած սոցիալական շարժման արգասիք, որի դեպքում ի թիվս մի շարք ռեսուրսների անհրաժեշտ է մոբիլիզացնել նաև սոցիալական ցանցերը, մասնավորապես խոսքը համացանցում բանակին աջակցության նպատակի շուրջ միավորված օգտատերերի հանրույթների մասին է: Հայեցակարգը մշակողները համացանցը դիտարկում են որպես վայր, որը հնարավորություն է տալիս հեշտության մեջ ձևավորելու մոբիլիզացման մթնոլորտի այն բոլոր բաղադրիչները, որոնք իրական միջանձնային փոխհարաբերություններում առանց համացանցի օգտագործման կպահանջեին շատ ավելի մեծ ջանքեր: Առաջարկվում է համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև կառավարման լծակերի կիրառմամբ պետությունում ստեղծել «մոբիլիզացման մթնոլորտ»: Նույն պարբերականի արդեն հաջորդ համարում մասնավորապես առաջարկվում է զինկոմիսարիատների աշխատողներին ակտիվ գործունեություն ծավալել սոցիալական ցանցերում՝ «նպաստելով երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, օգնելով նրանց ռազմամասնագիտական կողմորոշման հարցերում»:²⁰

«Իրազեկ քաղաքացիների միավորման» մշտադիտարկման թիմը դիտարկել և որակական վերլուծության է ենթարկել Facebook, Twitter, Instagram սոցիալական կայքերում ծավալվող հանրային քննարկումը «ազգ-բանակ» գաղափարախոսության շուրջ: Այս կայքերում մշտադիտարկման առարկա են դարձել անհատների անձնական էջերը, խմբերը և էջերը: Instagram սոցիալական կայքի մոնիտորինգի արդյունքները

¹⁹ «Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրումը ենթադրում է հասարակության և ՉՈՒ միջև որակապես նոր մակարդակի փոխգործության ձևավորում. Հ.Քոթանջյան, panorama.am, <https://www.panorama.am/am/news/2017/04/20/%D5%80-%D5%94%D5%B8%D5%A9%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B5%D5%A1%D5%B6/1764664>

²⁰ Ազգ-բանակ կոլեկտիվ մենագրություն, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ «Հայկական բանակ» ռազմական հանդես, N1-2 (91-92), 2017, <https://razmavaraget.files.wordpress.com/2017/07/armenian-army-n-1-2-2017.pdf>

ցույց են տալիս, որ այստեղ «ազգ-բանակ» կոնցեպտի քարոզչությունը այնքան էլ տարածված չէ: Այստեղ #ազգ_բանակ հեշթեգը գրեթե չի կիրառվել: Twitter սոցիալական կայքում կատարված մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ անհատների կողմից բուն «ազգ-բանակ» կոնցեպտին առնչվող հրապարակումները ևս սակավաթիվ են:

Մշտադիտարկված երեք հարթակներից «ազգ-բանակ» կոնցեպտի և դրա բաղադրիչների հիմնական քարոզչական հարթակը եղել է Facebook սոցիալական կայքը: Քարոզչական հրապարակումների մի մասը իրականացվել է պետական կառույցների կամ դրանց աշխատակիցների կողմից: Նախարարությունների ցանկում Facebook-ում «ազգ-բանակ» կոնցեպտի վերաբերյալ, բնականաբար, ամենաշատ հրապարակում կատարել է Պաշտպանության նախարարության Ֆեյսբուքյան էջը: Կանոնավոր հրապարակումներ են կատարել նաև ՊՆ խոսնակ Արծրուն Ջովհաննիսյանը, ինչպես նաև ՊՆ նախարար Վիգեն Սարգսյանը:

Հայեցակարգի վերաբերյալ դրական տոնով հրապարակումներ են կատարել նաև մի շարք այլ պետական ինստիտուտների էջեր կամ դրանց աշխատակիցներ: Այդ թվում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջը, որը բազմիցս կիրառել է #ազգ_բանակ հեշթեգը: Քաղաքապետարանից բացի «ազգ-բանակին» կողմ հրապարակումներ են կատարել նաև Երևանի մի քանի վարչական շրջանների Ֆեյսբուքյան էջեր:

Օգտատերերի առանձին խմբեր, օգտագործելով Ֆեյսբուքը, ևս զբաղվել են հայեցակարգի քարոզչությամբ:

«Ազգ-բանակի» քարոզչությունը եկեղեցու և մշակույթի միջոցով

«Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրման մասին հայտնի դառնալուց և Վիգեն Սարգսյանի՝ Պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցին՝ ի դեմս կաթողիկոս Գարեգին Բ-ի, իր աջակցությունը հայտնեց այդ գաղափարախոսությանը: Գարեգին Բ-ն Վիգեն Սարգսյանի հետ հանդիպմանը հայտարարել էր, որ հայ ազգի յուրաքանչյուր զավակ իրեն պետք է զգա հայ բանակի մասնիկը: Կաթողիկոսը խոստացել էր, որ Հայոց եկեղեցին ամեն ջանք և ամեն հնարավորություն կգործադրի այդ գիտակցության ձևավորման համար:²¹

Հայեցակարգի քարոզչության համատեքստում առանցքային նշանակություն ունի առաքելական եկեղեցու կողմից և միջոցով տարվող քարոզչությունը:

Պաշտպանության

նախարարության պաշտոնական կայքէջում ազգ-բանակ հայեցակարգի ներկայացման մեջ ներառված է եկեղեցու ներգրավման



անհրաժեշտությունը, քանի որ

ազգ-բանակն այն «արժեհամակարգն է, որ հենվելով

Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու բազմադարյա ամուր հիմքի վրա բարոյականության և սկզբունքների տիրույթում է պատրաստում իր զինվորին ծառայության»:²²

Ազգ-բանակ հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է նաև մշակութային-քարոզչական միջոցառումների շնորհիվ: Հայեցակարգի ներդրման մասին հայտնի դառնալուց անմիջապես հետո 2016թ.-ի դեկտեմբերի 16-ին կազմակերպվեց առաջին «Ազգ-բանակ» անունը խորագրով համերգը, որի հասույթը, ՊՆ հաղորդմամբ, հատկացվելու էր ապրիլյան քառօրյա մարտական գործողություններին մասնակցած զինվորների ընտանիքներին:²³ Հետագայում «Ազգ-բանակ» խորագրով բազմաթիվ միջոցառումներ են իրականացվել:

2017 թվականի օգոստոսին տեղի ունեցավ «Դետք» խմբի «Մի ազգ, մի բանակ» երգի պրեմիերան, մի քանի ամիս անց հայտնվեց նաև այդ երգի տեսահոլովակը:²⁴ Տեսահոլովակի ներքո արված գրառման մեջ խմբի անդամները հատուկ շնորհակալություն էին հայտնել «Փյունիկ» հիմնադրամին, որի տնօրենը նախկին նախագահ Սերժ Սարգսյանի եղբայր Լևոն Սարգսյանն է:

²¹ Վիգեն Սարգսյան. Ազգն ու բանակը պետք է նույնականացվեն, Մեդիամաքս, 11.10.16, <https://mediamax.am/am/news/society/20153/>

²² Ազգ-բանակ, ՀՀ ՊՆ, <http://www.mil.am/hy/pages/21>

²³ «Ազգ-բանակ» համերգի հասույթը՝ ապրիլյան պատերազմի մասնակիցների ընտանիքներին, panarmenian.net, <http://www.panarmenian.net/arm/news/228484>

²⁴ «Դետք, «Մի ազգ, մի բանակ», <https://www.youtube.com/watch?v=gq56zM7im1Q>

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

«Հայաստանում կրթական համակարգի մեծագույն առաքելությունն ազգ-բանակ գաղափարախոսությունը յուրաքանչյուր ընտանիքի համար մատչելի, հասանելի դարձնելն է»:

Լևոն Մկրտչյան, ՀՀ ԿԳ նախարար [2016-2018]

Ուսումնական հաստատություններում «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է Կրթության և գիտության նախարարության և Պաշտպանության նախարարության համագործակցությամբ: 2017 թվականի ապրիլին, ելույթ ունենալով «Ազգ-բանակ 2017» համաժողովում, որը ՊՆ-ն կազմակերպել էր ԿԳՆ-ի հետ համատեղ,²⁵ ԿԳ այդ պահին նախարար Լևոն Մկրտչյանը հանձնարարական տվեց ուսուցիչներին և դպրոցների տնօրեններին անել ամեն բան, որպեսզի դպրոցն ավարտելիս ավելի շատ շրջանավարտ երագի սպա դառնալու մասին: Մկրտչյանը նաև հայտարարել էր, թե չկա ավելի բարձր մասնագիտություն քան սպայի մասնագիտությունը: Նախարարը որպես համալսարանների կողմից կրթական որակի մեջ արձանագրած լուրջ հաջողություն էր ներկայացրել այն հանգամանքը, որ ապրիլյան պատերազմին եղան համալսարաններ, որտեղ հարյուրավոր կամավորներ ցուցակագրվեցին հերոսամարտին և ունեցանք կամավոր զոհեր:²⁶

Իր հերթին, նույն համաժողովի ընթացքում պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, հանձնարարական տվեց ուսուցիչներին՝ հաշվի առնել և պլանավորել այնպես, որ արդեն ընթացիկ տարում, իսկ հետագայում արդեն յուրաքանչյուր տարի, շրջանավարտ ունեցող յուրաքանչյուր դպրոց առնվազն մեկ դիմորդ ուղարկի ռազմաուսումնական հաստատություններ:²⁷

«Ազգ-բանակ 2017» համաժողովի ավարտին ներկա ուսուցիչներին և դպրոցների տնօրեններին բաժանվել են քարոզչական նյութեր, տեսաֆիլմեր և բուկլետներ:

«Ազգ-բանակը այն դպրոցն ու գործարանն են, որ միմյանց տրամաբանական շարունակությունն են, ուր ուսուցիչը, ծնողն ու հրամանատարը միասին են աշխատում վաղվա սերնդի դաստիարակության ուղղությամբ»:

Վիգեն Սարգսյան, ՀՀ պաշտպանության նախարար [2016-2018]

Դպրոցներում և կրթական այլ հաստատություններում ռազմականացման քարոզչությունը նոր միտում չէ, սակայն «ազգ-բանակ» հայեցակարգի ներդրումից հետո, նման քարոզչությունն աննախադեպ աճ է գրանցել մեկ տարվա ընթացքում: Պաշտպանության նախարարությունը զինվորական ծառայության մասին կայուն դիրքորոշումների ձևավորման առումով անհրաժեշտություն է համարել դպրոցներում

²⁵ «Ազգ-բանակ-2017» համաժողով, աղբյուրը՝ ՊՆ կայք , <http://www.mil.am/hy/news/4723> հրապարակվել է՝ 18.04.2017

²⁶ Լևոն Մկրտչյանի ելույթը Ազգ-բանակ 2017 համաժողովին, <http://edu.am/index.php/am/news/view/6568>

²⁷ Վիգեն Սարգսյանի ելույթը Ազգ-բանակ 2017 համաժողովին, 20.04.17, https://www.youtube.com/watch?time_continue=1067&v=VE_3UOAN1As

ստեղծել ռազմահայրենասիրական թեմաներով դպրոցների և զորամասերի համատեղ միջոցառումների կազմակերպման ավանդույթ:

Հայեցակարգի քարոզչության նպատակով դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել են մշակութային-քարոզչական և տեղակատվական-քարոզչական միջոցառումներ:

Կրթական հաստատություններ են այցելել տարբեր կոչումներ ունեցող զինծառայողներ՝ ներկայացրել «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը, «բանակի դերն ու նշանակությունը, ազգ-բանակ հայեցակարգը»: Որոշ դպրոցներում նույն թեմաներով դասախոսություններով հանդես են եկել ոստիկանության աշխատակիցներ: Անց են կացվել «Դասը վարում է սպան» խորագրով միջոցառումներ: Մի շարք դպրոցներում աշակերտների համար ընթերցվել է Վիգեն Սարգսյանի «Ազգ-բանակ 2017» համաժողովի ելույթը: Այս թեմայով բաց դասերի ընթացքում աղջիկներին ներկայացվել է պայմանագրային հիմքով ծառայելու հնարավորությունները բանակում:

Կազմակերպվել են ռազմական խաղեր, բանակումներ, զինվորական թեմաներով շարադրությունների և նկարների մրցույթներ, ցուցադրություններ, բաց դասեր: Երևանի N132 միջնակարգ դպրոցում ՊՆ աջակցությամբ և կահավորմամբ բացվել է հրաձգարան: ՀՀ ԿԳՆ-ի և ՊՆ-ի կողմից համատեղ իրականացվել է ռազմահայրենասիրական խաղերի «Կորյուն» մրցույթը, որն ուղղված է եղել «Ազգ-բանակ» գաղափարախոսության ամրապնդմանը:

2018թ.-ի մարտին Ճիրակի մարզում տեղական իշխանության մարմինները պարզևատրել են մանկավարժների, ում աշակերտները ծառայության ընթացքում աչքի են ընկել «կյանքը հայրենիքին զոհաբերելու պատրաստակամությամբ»:

Նույն ամսին իրավական ակտերի նախագծերի միասնական կայքում հրապարակվեց «Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարությանը հավանություն տալու ՀՀ կառավարության որոշման» նախագիծը: Որոշման նախագծում ԿԳՆ-ն շարադրել էր այն մարտահրավերները, որոնցով պայմանավորված է դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը: Որպես երկրում առկա «ներքին մարտահրավերներ» նշված են «հայրենիքի պաշտպանությանը ոչ պատրաստակամ քաղաքացիների



առկայությունը», «օտար մշակութային արժեքներին հաղորդակից լինելու տենդենցը», «սեռական այլասերվածությունը և այլ նման արատավոր երևույթները»:

Վիզեն Սարգսյանն իր հերթին մի քանի անգամ հայտարարել է, որ իրեն չի բավարարում դպրոցներում նախնական զինվորական պատրաստությունն առարկայի ուսուցանման ներկա ձևաչափը և որ նախարարությունը պատրաստվում է պարտադիր ամառային ճամբարներ անցկացնել աշակերտների զինվորական պատրաստությունը բարելավելու նպատակով:²⁸

Հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ուսանողներից բացի զինվորական պատրաստության դասընթացներ են իրականացվել նաև դասախոսների համար: Երևանի պետական համալսարանում առաջին անգամ կազմակերպվել են զինվորական նախնական պատրաստության դասընթացներ համալսարանի երիտասարդ դասախոսների համար:

Ուսանողներն այցելել են մարտական հերթապահություն իրականացնող զորամասեր, այնտեղ հանդես եկել մշակութային ելույթներով: Պաշտպանության նախարարության բարձրաստիճան զինծառայողներ այցելել են տարբեր համալսարաններ, ներկայացրել «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերը:

«Ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչությամբ է զբաղվել ԿԳՆ պաշտոնաթերթը հանդիսացող «Կրթություն» շաբաթաթերթի էջը Ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում «Ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունը եղել է կենտրոնացված և պարտադրված՝ վերևից ներքև: Կրթական հաստատություններում «Ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ «Իրազեկ քաղաքացիների միավորման» պրոպագանդայի մոնիթորինգի թիմը ներկայացրել է առանձին զեկույցով:²⁹

«Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակներում ընդունված օրենսդրական կարգավորումները

Կառավարության 2016 թվականի հոկտեմբերին հաստատված ծրագրով հաստատվեց, որ պաշտպանության ոլորտում կառավարության գործունեության հիմքում դրվում է «ազգ-բանակ գաղափարը»՝ «հասանելի ռեսուրսներով՝ առավելագույն արդյունք ռազմավարական սկզբունքով»: Մոտ մեկ ամիս անց Վիզեն Սարգսյանը Սերժ Սարգսյանին զեկույցեց վերջինիս հանձանարականով մշակվող մի նոր ծրագրի մեկնարկի մասին, որը նախատեսում է նոր կարգ սահմանել զոհված և հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու համար:³⁰ Համաձայն ՀՀ նախագահի մամուլի

²⁸ Վիզեն Սարգսյանի հարցազրույցը «Ռազմինֆո»-ին, 12.03.18, <https://razm.info/123112>

²⁹ ««Ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունը ուսումնասկան հաստատություններում» զեկույց, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ, 2018, http://uicarmenia.org/wp-content/uploads/2018/05/Nation-Army-Education-system_arm.pdf

³⁰ Պաշտպանության նախարարը Հանրապետության նախագահին զեկույցել է զոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության նոր ծրագրի

քարտուղարության՝ նախագահի պաշտոնական կայքէջում հրապարակված հաղորդագրությամբ Վիգեն Սարգսյանը Սերժ Սարգսյանին զեկուցել է, որ ծրագիրը նախագծված է հենց «Ազգ-բանակ» տրամաբանության մեջ, որտեղ ամբողջ հասարակությունն իր վրա է վերցնում Հայրենիքի պաշտպանի սոցիալական բեռը, իսկ բանակն օգնում է այդպիսի վիճակում հայտնված իր զինծառայողին կամ զոհվելու դեպքում՝ նրա ընտանիքին: Նոյեմբերի 10-ին կառավարության կողմից հավանության արժանացավ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների առողջությանը կամ կյանքի վնասի փոխհատուցման մասին» օրինագիծը: Օրինագծի համաձայն՝ 2017թ. հունվարի 1-ից յուրաքանչյուր աշխատող ֆիզիկական անձ ամսական 1000 դրամ է վճարում համապատասխան ֆոնդին, որը հետագայում հայտնի դարձավ 1000 դրամների ֆոնդ անվամբ:

«Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակում սա առաջին նախաձեռնությունը և իրավական կարգավորում ստացած փաստաթուղթը դարձավ: Բացասական հասարակական արձագանքը և բազմաթիվ քննադատությունները զուգահեռաբար ուղեկցվեցին մեդիայի և տարբեր պաշտոնյաների, հասարակական գործիչների կողմից այս նախաձեռնության քարոզչությամբ: Մասնավորապես, զոհված կամ հաշմանդամություն ունեցող զինծառայողների ֆոնդին պարտադիր կերպով ամսական 1000 դրամ աշխատավարձից հատկացնելը ներկայացվել է որպես այդ զինծառայողների ընտանիքների հանդեպ **յուրաքանչյուր մարդու բարոյական պարտքի ամրագրում**, ինչպես նաև իր ազգի և բանակի նկատմամբ մարդու ունեցած **պատասխանատվության ցուցանիշ**, շեշտվել է հանգամանքը, որ **յուրաքանչյուր հայ ընտանիքում կարող է նման դեպք գրանցվել**, ինչպես նաև, որ ուսուցիչը պետք է ավելի մեծ նվիրումով գիտելիք ու բարոյականություն սերմանի իր աշակերտի հոգում, եթե անգամ իր աշխատավարձի չափը չի համատասխանում իր կատարած աշխատանքին:³¹ Քարոզչական դրույթներից մեկի համաձայն՝ **բանակի հետ կապված պատասխանատվությունը՝ բոլորի պատասխանատվությունն է:**³²

2017 թվականի ապրիլի 20-ին Պաշտպանության նախարարությունը կազմակերպեց «Ազգ-բանակ 2017» համաժողովը:³³ Համաժողովի ընթացքում Վիգեն Սարգսյանը ներկայացրեց «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը, որոնք այլընտրանք էին մինչ այդ գոյություն ունեցող ժամկետային զինծառայությանը:

«Ես եմ» ծրագիրը 2 տարի ծառայության փոխարեն նախատեսում է 3 տարվա ծառայություն: Այս ծրագրով ծառայության դեպքում զինծառայողը ծառայության 5-րդ ամսից հետո, անցնելով մարտական հերթապահության, 2 շաբաթ տնողությամբ հերթապահությունից հետո մեկ շաբաթ անց է կացնում զորամասում, մեկ շաբաթ՝ տանը՝ ստանալով արձակուրդային գումար: Ծառայության ավարտին պետությունը

մեկնարկի մասին, 08.11.16, <http://www.president.am/hy/press-release/item/2016/11/08/President-Serzh-Sargsyan-meeting-with-Minister-of-Difence-08-11/>

³¹ «Ազգ-բանակ», «Հայ զինվոր», <http://www.hayzinvor.am/43453.html>

³² Ֆինանսների նախարար Վարդան Արամյանի մեկնաբանությունը, 14.11.16, <https://www.aysor.am/am/news/2016/11/14/%D5%A1%D5%B4%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-1000-%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4/1167893>

³³ «Իրազեկ քաղաքցիների միավորում» ՀԿ-ի Պաշտպանության նախարարություն ուղարկված հարցմանն ի պատասխան գերատեսչությունը հայտնել էր, որ ապրիլի 21-23-ն անցկացված ցուցահանդեսի և «Ազգ-բանակ 2017» համաժողովի կազմակերպման համար, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով ոչ պետական բյուջետային միջոցների հաշվին հատկացվել է 45.276.620 ՀՀ դրամ:

ծառայության այս տեսակն ընտրած քաղաքացուն փոխհատուցում է 5 միլիոն դրամ, որը վերջինս կարող է օգտագործել պետության կողմից առաջարկվող ծրագրերից մեկով՝ ուսում ստանալ, փոքր գյուղատնտեսական գործունեություն սկսել կամ բնակարան գնել:

«Պատիվ ունեմ» ծրագիրը հնարավորություն է տալիս ուսանողին տարկետում ստանալ կրթությունը շարունակելու համար, սակայն քաղաքացիական մասնագիտության կրթությանը զուգահեռ զինծառայության այս տեսակն ընտրած քաղաքացին պարտավորվում է ուսանել նաև Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և ստանալ զինվորական մասնագիտություն: Այս դեպքում պետությունը փոխհատուցում է նաև ուսանողի ուսման վարձը: Ուսումն ավարտելուց հետո քաղաքացին, ստանալով լեյտենանտի զինվորական կոչում, երեք տարի ժամանակով ծառայության է անցնում զինված ուժերում:

Համաժողովի ընթացքում Սարգսյանը խոսելով «Պատիվ ունեմ» ծրագրի մասին՝ առաջարկում է տարկետման հնարավորություն տալ միայն այն ուսանողներին, ովքեր պատրաստ են ուսումն ավարտելուց հետո սպայական ծառայության անցնել: Մայիսի 4-ին մեկնարկեցին նախարարի ներկայացրած ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումները:

Ավելի ուշ Պաշտպանության նախարարությունը գործարկեց «Դիտակետ» ծրագիրը, որը ծառայությունն ավարտած քաղաքացիների շրջանում բանակում գոյություն ունեցող իրավիճակի վերաբերյալ հարցումների իրականացման նպատակ ունի:

2017 թվականի հունիսին ընդունվեց կառավարության նոր ծրագիրը, որով ամրագրվեց, որ «ազգ-բանակ հայեցակարգի կյանքի կոչման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2020 թվականի ավարտը՝ բարձրացնել զինվորական ծառայության գրավչությունը, զինված ուժերի արհեստավարժ բաղադրիչն ընդլայնելու համար ապահովել հավաքագրման շահավետ պայմաններ՝ հատկապես կարևորելով այնպիսի ծրագրային նախագծերի ներդրումը, ինչպիսիք են պարտադիր զինվորական ծառայությանը զուգահեռ մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու պայմանով շարքային կազմի կամ ՀՀ Պաշտպանության նախարարության պատվերով բարձրագույն կրթություն ստացած անձանց կողմից սպայական կազմի պայմանագրային զինվորական ծառայության իրականացումը»:

Հոկտեմբերի 27-ին խորհրդարանն ընդունեց «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը, որով սահմանափակվեց ուսանողների տարկետման իրավունքը: Օրենքի ընդունումն ուղեկցվեց «Հանուն գիտության զարգացման» նախաձեռնության կողմից բողոքի ցույցերով ինչպես նաև հասարակական դժգոհությամբ: Դրան զուգահեռ մեղիայում ի հայտ եկան «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչության շրջանակում քարոզչական նոր դրույթներ, մասնավորապես **առանց կայացած անվտանգային համակարգի չկա մրցունակ կրթություն, տարկետում պահանջողները բանակից խուսափելու նպատակ ունեն, գիտությամբ հնարավոր է զբաղվել նաև բանակում ծառայությունից հետո, բանակը խթանելու է գիտության զարգացումը:** Ներքին հակասություններին զուգահեռ փորձ արվեց տարկետման իրավունք պահանջող ուսանողների ցույցերը կապել օտար ուժերի հետ՝ մասնավորապես մեղադրելով Արևմուտքին Հայաստանում հակապետական գործունեություն ծավալելու մեջ:

Չնայած ընդունված մի շարք օրենսդրական կարգավորումներին՝ «ազգ-բանակ» հայեցակարգն այդպես էլ գրավոր ձևակերպում չստացավ: Միակ փաստաթուղթը, որը հրապարակվեց այս հայեցակարգի համատեքստում «ՀՀ ՁՈՒ 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրն» էր,³⁴ որ ՊՆ պաշտոնական կայքէջում հայտնվեց 2018 թվականի փետրվարին: Ծրագրում «ազգ-բանակը» ներկայացված է որպես արդիականացման տեսլական: Առաջին անգամ գրավոր ներկայացվեցին հայեցակարգի հիմնասյուները՝ առաջնորդություն, օրինապաշտություն և մարդակենտրոնություն, առաջադիմություն, նորարարականություն, ներառականություն: Որպես արդիականացման տեսլական պատրաստվում է հիմք դնել իրականության, որտեղ բանակը պետք է դառնա առաջնորդների դարբնոց և քաղաքացու մեջ ձևավորելու է հարգանք օրենքի նկատմամբ, «զինվորական» և «բանակային» բառերը հասարակության համար պետք է նշանակեն «առաջադեմ» և «առավել ուսյալ»:

Եզրակացություն

«Ազգ-բանակ» հայեցակարգը իշխանության նախաձեռնությամբ սկսած և վերևից ներքև պարտադրված սոցիալական շարժում էր, որի քարոզչության նպատակով նախկին իշխանությունը կիրառել է սոցիալական, տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարական լծակներ:

- Ազգ-բանակ հայեցակարգը, ներդրվելով 2016 թվականի հոկտեմբերին, հասարակությանը ներկայացվել է որպես պատմականորեն փորձված և արդեն գոյություն ունեցող իրականություն, սակայն այդպես էլ գրավոր ձևակերպում չի ստացել:
- Հայեցակարգի քարոզչության հետևանքով ուսումնական հաստատություններում, մասնավորապես դպրոցներում և համալսարաններում նկատվել է ռազմականացման աննախադեպ աճ:
- Հայեցակարգի քարոզչության համար օգտագործվել են հեռուստատեսությունը, առցանց և տպագիր ՉԼՄ-ները, ռադիոն:
- Չանգվածային լրատվության միջոցներից բացի հայեցակարգը քարոզվել է մշակութային գործիքների, սոցիալական գովազդների, պաստառների, երգերի միջոցով:
- Հայեցակարգը նպատակ էր հետապնդում ստեղծելու այնպիսի հասարակություն, որտեղ սպայի մասնագիտությունն ամենահարգվածն է: Սա հասարակության ռազմականացման անուղղակի միջոց է:
- Պետության պարտականություններն՝ ապահովելու քաղաքացիների անվտանգությունը բանակի միջոցով, փորձ է արվել որոշ չափով թողնել հասարակության վրա, հասարակության գիտակցության մեջ կանոնակարգային դարձնել սահմանին գոհվելը և բանակի

³⁴ ՀՀ ՁՈՒ 2018-2024 թվականների արդիականացման ծրագիր, <http://mil.am/hy/libraries/40>

պատասխանատվությունը
պատասխանատվություն:

դարձնել

հասարակության

- Հասարակությանը փորձել է ներկայացվել, որ «ազգ-բանակն» այլընտրանք չունի, այն ոչ թե ընտրություն է, այլ պարտադրանք, որը կենսական նշանակություն ունի և ժամանակի մարտահրավեր է:
- Հայեցակարգը միտված է եղել երկրում մոբիլիզացիայի մթնոլորտի ստեղծմանը:

2018 թվականի մայիսին Հայաստանում իշխանության փոփոխությունից հետո հայեցակարգի քարոզչությունը անորոշ ժամանակով չի տարվում, սակայն հասարակության մի մասը, հաշվի առնելով տևական ժամանակ տարված պրոպագանդայի ազդեցությունը, կիսում է ռազմականացմանն ուղղված քարոզչության մի շարք գաղափարներ: